

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Տօն Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Քրիստոս իր հրաշափառ յարութիւնէն ետք 40 օրեր անցուց իր աշակերտներուն հետ՝ խօսելով անոնց Աստուծոյ արքայութեան մասին:

Քրիստոնեաներու համար մեծագոյն հրաշքը Քրիստոսի յարութիւնն է: Յարութենէն անմիջապէս յետոյ, մինչեւ համբարձուիլը՝ Քրիստոս շարունակեց յայտնուիլ իր աշակերտներուն եւ անոնց ներկայութեան հրաշքներ գործել: Աշակերտներուն պատուիրեց Երուսաղէմ մնալ մինչեւ Պենտեկոստէի տօնը, ինչպէս նաեւ յորդորեց, որ երթան եւ աշխարհին քարոզեն, առանց զատողութիւն դնելու հեթանոսներու եւ հրեաներու միջեւ:

Այսպիսով Քրիստոս կ'ուզէր շեշտել, որ ինք աշխարհ եկաւ բոլոր մարդկութեան համար՝ հաւասարապէս: Առաքեալներուն իշխանութիւն տուաւ որ երթան եւ սորվեցնեն իր մասին եւ անոնք, որոնք կ'ընդունին Յիսուսը՝ մկրտեն անոնց Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին անունով: Անոնց պատուիրեց նաեւ սորվեցնել այն ամէնը, ինչ իրենք սորվեցան Քրիստոսէն՝ իրենց հետ եղած ժամանակ:

Յարութենէն մինչեւ Համբարձում ինկած քառասնօրեայ շրջանին բազում հրաշքներ տեղի ունեացան, որոնցմէ առաջինը Քրիստոսի յայտնուիլն էր այն սենեակին մէջ, ուր հաւաքուած էին իր աշակերտները: Առաքեալներէն Թովմաս, որ միւսներուն հետ չէր Քրիստոսի առաջին յայտնութեան ժամանակ, չհաւատաց հրաշքին եւ ըսաւ. «Եթէ անոր ձեռքերուն վրայ չտեսնեմ գամերուն նշանը եւ իմ մատներս գամերուն տեղերը չդնեմ ու իմ ձեռքս չմխրճեմ անոր կողին մէջ՝ չեմ հաւատար»: Ութ օր յետոյ աշակերտները դարձեալ ներսն էին, եւ Թովմաս ալ՝ անոնց հետ: Յիսուս եկաւ գոց դռներէն, կեցաւ մէջտեղը եւ ըսաւ. «Խաղաղութիւն ձեզի»:

Ապա ըսաւ Թովմասին. «Բեր քու մատներդ եւ դիր այստեղ ու տես իմ ձեռքերս. եւ բեր քու ձեռքդ ու մխրճէ իմ կողիս մէջ. անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ»: Թովմաս պատասխան տուաւ անոր եւ ըսաւ. «Տէր իմ եւ Աստուած իմ»: Յիսուս ըսաւ անոր. «Դուն զիս տեսար եւ հաւատացիր. երանի՛ անոնց որ չեն տեսած ու կը հաւատան» (Յովհ. Ի 20-29):

Հայ Առաքելական Եկեղեցոյ զաւակները Թովմասի նման պէտք է հաւատան եւ ընդունին Քրիստոսը առանց տեսնելու անոր, որովհետեւ Յիսուս մեր մէջ է ամէն օր եւ ամէն վայրկեան: Ամենօրեայ մեր ապահովութիւնը ինքնին Աստուծոյ եւ անոր Միածին Որդոյ՝ Յիսուս Քրիստոսի օրհնութեան եւ մեր կեանքէն ներս ներկայութեան անհերքելի ապացոյցն է: Անսասան ըլլանք մեր հաւատքին մէջ եւ ըլլանք այն երանելի անձը, որ առանց տեսնելու Քրիստոսը կը հաւատայ անոր զօրութեան եւ ուժին:

Համբարձման տօնը այս տարի պիտի տօնուի Մայիս 18-ին: Ամերիկայի Արեւելեան թեմի Հայ Եկեղեցիներէն մէկը, որ կը գտնուի Քէնէթիքթէ նահանգի Թրամպլը քաղաքին մէջ նուիրուած է Քրիստոսի Համբարձման, եւ կը կոչուի Ս. Համբարձման Եկեղեցի: Ամէն տարի մեր Տիրոջ հրաշափառ Համբարձման տօնի Ս. Պատարագը կը մատուցուի այս եկեղեցոյ մէջ, որուն ներկայ կ'ըլլան եկեղեցիին մօտ գտնուող հոգեւորականներ եւ հաւատացեալներ: